<u>ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ</u> N 02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 04-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան **04.04.2022թ.**

2022 թվականի ապրիլի 04-ին տեղի ունեցավ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) հերթական նիստ:

Մասնակցում էին՝

Վ. Քերոբյան	– ՀՀ էկոնոմիկայի նախարար
Ա. Ասոյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ա. Հայրապետյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Լ. Նանուշյան	- ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
Ն. Տերյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Մ. Հակոբյան	- Սպառողների ազգային ասոցիացիայի նախագահ
Ա. Մկրտչյան	- Հայաստանի ոսկեգործների և ադամանդ արտադրողների ասոցիացիայի նախագահի գլխավոր խորհրդական
Գ. Սահակյան	- խորհրդի քարտուղար
Ա. Կոտոլյան	– Տեսչական մարմնի ղեկավար
Ա. Մկրտչյան	– Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ
Ա. Բաբայան	- «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի տնօրենի պաշտոնակատար
Լ. Մինասյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի շուկայի վերահսկողության և սննդամթերքի անվտանգության ոլորտների համակարգման և մեթոդաբանության վարչության պետ

Բացակայում էին՝

Ա. Հովհաննիսյան - Արդարադատության նախարարի տեղակալ

Կ. Սահակյան - ԵՊՀ դասախոս, տնտեսական գիտությունների թեկնածու

Կ. Միրզաբեկյան - ՀԱՊՀ դասախոս, դոցենտ

Քվեարկության օրակարգային հարցեր.

1. Նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ քննարկում:

Զեկուցող՝ Ա. Կոտոյան

2. Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության կողմից 2021 թվականին իրականացրած հսկողական գործողությունների վերաբերյալ հաշվետվության ներկայացում:

Զեկուցողներ՝ Ա Սարգսյան

3. Տեսչական մարմնի 2022 թվականի 1-ին եռամսյակում թեժ գծով ստացված հեռախոսազանգերի և դիմում-բողոքների հաշվետվությանը հավանություն տալու մասին:

Զեկուցող՝ Ա. Կոտոյան

4. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 6-ի N 730-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերին հավանություն տալու մասին:

Զեկուցող՝ Ա. Կոտոյան

5. Տեսչական մարմնի կառավարման խորհրդի հաջորդ կայանալիք նիստի ամսաթիվը համաձայնեցնելու մասին:

Զեկուցող՝ Ա. Կոտոյան

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նիստին ներկա էին խորհրդի անդամների 2/3-ից ավելին՝ նիստը համարվեց կայացած:

Խորհրդի անդամները միաձայն քվեարկությամբ հաստատեցին օրակարգը:

1. Քննարկվեց օրակարգի հարց՝ նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ.

Նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ զեկուցեց Արմեն Կոտոյանը, բովանդակային ներկայացրեց անհատներին տրամադրվող գազի որակի ստուգման հետ կապված ընթացակարգերը: Արթուր Ասոյանը նշեց, որ ներբնակարանային գազի վերահսկողության պատշաճ իրականացման համար

անհրաժեշտ է տեսչական մարմնին տրամադրել նաև համապատասխան գործիքակազմ՝ նախատեսելով օրենքի շրջանակներում ռեֆերենս լաբորատորիաների գործակցման հնարավորություն: Վահան Քերոբյանը առաջարկեց մեկ շաբաթվա ընթացքում Խորհրդի անդամներին ներկայացնել տեղեկանք այն մասին, թե արդյոք սպառողներին մատակարարվող կենցաղային գազի գինը հաշվարկվում է ելնելով գազի կալորիականությունից:

Հաջորդ հանձնարարականը վերաբերում էր սույն թվականի ապրիլի 18-ին հաջորդող շաբաթվա ընթացքում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունում Հայաստանի Հանրապետություն ներմուծվող տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող ոչ պարենային արտադրանքի համապատասխանության գնահատման փաստաթղթերի հետ կապված քննարկում կազմակերպելուն:

Հանձնարարվեց նաև ներկայացնել տեղեկանք հեռավար ստուգումների իրականացման հնարավոր տարբերակների, ինչպես նաև Պետական եկամուտների կոմիտեի հետ համագործակցման և վերջինիս տվյալների բազաներին մուտք ունենալու հնարավորությունների վերաբերյալ:

Խորհրդի անդամների 7 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ հավանություն տրվեց նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ զեկույցին:

2. Քննարկվեց օրակարգի հարց՝ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության կողմից 2021 թվականին իրականացրած հսկողական գործողությունների վերաբերյալ հաշվետվությունը.

Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետ Ա.Սարգսյանը ներկայացրեց որակի ապահովման վարչության կողմից 2021 թվականին իրականացրած հսկողական գործողությունների վերաբերյալ հաշվետվությունը: Քննարկման ընթացքում Ա.Սարգսյանը հայտնեց, որ ստուգման նախագծերը, ակտերը, ծանուցագրերը և ստուգմանն առնչվող այլ փաստաթղթերը պաշտոնական էլեկտրոնային փոստով ուղարկելու, այն է՝ տնտեսավարող սուբյեկտի լսված լինելու իրավունքը խախտելու հիմքով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ներկայացվել է թվով 6 հայցադիմում, որոնք գտնվում են դատաքննության փուլում: Լ. Մինասյանն առաջարկվեց կատարել օրենքի անալոգիա քաղաքացիական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումներից՝ էլեկտրոնային եղանակով կամ կապի այլ միջոցով ծանուցումներ իրականացնելու

վերաբերյալ և մշակել դիմումի օրինակելի ձև, այն տնտեսավարողների համար, ովքեր ցանկություն կհայտնեն վերահսկողության շրջանակներում տեսչական մարմնի ծանուցումները ստանալ իրենց էլեկտրոնային փոստին կամ իրենց կողմից տրամադրված էլեկտրոնային հաղորդակցության միջոցներին՝ կրելով այդ ծանուցումները չկարդալու անբարենպաստ հետևանքները:

Վահան Քերոբյանը առաջարկեց տվյալ հարցի վերաբերյալ օրենսդրական փոփոխություն կատարելուն անդրադառնալ գործերից որևէ մեկով օրինական ուժի մեջ մտած վճռի կայացումից հետո:

Խորհրդի անդամների 7 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ ի գիտություն ընդունվեց Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության կողմից 2021 թվականին իրականացրած հսկողական գործողությունների վերաբերյալ հաշվետվությունը:

3. Քննարկվեց օրակարգի հարց՝ Տեսչական մարմնի 2022 թվականի 1-ին եռամսյակում թեժ գծով ստացված հեռախոսազանգերի և դիմում-բողոքների հաշվետվությանը հավանություն տալու վերաբերյալ.

Վահան Քերոբյանը առաջարկեց Տեսչական մարմնի 2022 թվականի 1-ին եռամսյակում թեժ գծով ստացված հեռախոսազանգերի և դիմում-բողոքների հաշվետվությանը հավանություն տալ էլեկտրոնային քվեարկությամբ:

Խորհրդի անդամների 7 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ որոշվեց Տեսչական մարմնի 2022 թվականի 1-ին եռամսյակում թեժ գծով ստացված հեռախոսազանգերի և դիմում-բողոքների հաշվետվությանը հավանություն տալ էլեկտրոնային քվեարկությամբ:

4. Քննարկվեց օրակարգի հարց՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 6-ի N 730-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերին հավանություն տալու վերաբերյալ.

Արմեն Կոտոյանը հիմնավորեց «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 6-ի N 730-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների ընդունման անհրաժեշտությունը և ներկայացրեց որոշումների նախագծերը:

Խորհրդի անդամների 7 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ որոշվեց հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի

հունիսի 6-ի N 730-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերին:

5. Քննարկվեց օրակարգի վերջին հարցը՝ հաջորդ կայանալիք կառավարման խորհրդի հերթական նիստի ամսաթվի համաձայնեցման վերաբերյալ.

Վահան Քերոբյանը առաջարկեց Խորհրդի հաջորդ նիստը անցկացնել 2022 թվականի մայիսի 02-ին-ին ժամը 14:30-ին:

Խորհրդի անդամների 7 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ որոշվեց Խորհրդի հաջորդ նիստը անցկացնել 2022 թվականի մայիսի 02-ին ժամը 14:30-ին:

Կառավարման խորհրդի նախագահ՝

_____ **Վ.Քերոբյան**

ստորագրություն

Կառավարման խորհրդի քարտուղար՝

_____ **Գ.Սահակյան**

ստորագրություն